

**ԳՐԱՐԱՐԱԼՆԶՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՐԱՌԸ»**

ԳԵՂՈՐԳ ԲԱՂԴԻՇՅԱՆ

Առաջին համարարբառը ստեղծել են ասորիները, որի հեղինակը համարվում է Տատիանոս Ասորին: Նրա կազմած չորս ավետարանների համաբարբառի վերաբերյալ IV դ. մեկնություն է գրել Եփրեմ Խուրի Ասորին: Այս երկից հետո տարբեր ժամանակներում թարգմանական ու ինքնուրույն համաբարբառներ են ստեղծվել, և գոյացել է համաբարբառային բավական հարուստ գրականություն:

Եփրեմ Խուրի Ասորու երկը V դ. թարգմանվել է հայերեն՝ «Մեկնութիւն համաբարբառի, որ ըստ չորից ավետարանչաց» խորագրով¹: Ուրեմն, համաբարբառ² բառը հայ մատենագրության մեջ գործածվել է դեռևս V դ.: Տատիանոսի գործի թարգմանության վերաբերյալ ուշագրավ է Պ. Հսապալյանի հետևյալ դիտողությունը. «Հայերեն Համաբարբառով սեռած պիտի ըլլային նաև հայ Ավետարաններու ճանաչույն թարգմանիչները, վասն զի անկե սերտած տեղիքները թարգմանության պատճառով հաճախ սպառնում են անոնց գրչին տակ»³: Մեր պատմիչներն էլ սնվել են ավետարաններից, դրանցով ուսանել ու հղկել իրենց լեզվական ճաշակը, դրանցից մեջբերումներ կատարել իրենց գործերում: Նշանակում է կարելի է ենթադրել, թե Տատիանոսի համաբարբառն այս ճանապարհով ինչ-որ չափով հետք է թողել նաև դասական գրաբարի վրա:

Մինչև XVIII դ. հայերեն թարգմանվել են այլալեզու այլ համաբարբառներ, իսկ XVIII դ. մեզանում սկսվում է ինքնուրույն համաբարբառների ստեղծման շրջանը: Ըստ Հ. Անասյանի, համաբարբառ են կազմել Արզրումեցի

1 Հ. Ս. Անասյան, Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, էջմիածին, 1972:

2 «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք», Կ. Բ, Վենետիկ, 1836:

3 Համաբարբառ բառի առաջին խմաստը «Առձեռն բառարանը» (Վենետիկ, 1865, էջ 461) բացատրում է՝ «համաձայն, միաբան»: Սա բառիս սկզբնական նշանակությունն է: Հետագայում այն գործածվել է նաև գոյականաբար՝ «նշանակելով համաձայնություն, միաձայնություն, ձայնակցություն, ուստի նաև՝ հետադարձություն, համընթացություն, համադրություն, համընկնում, առաջություն» (տե՛ս Հ. Ս. Անասյան, նշվ. աշխ. էջ 2):

Այժմ համաբարբառ բառը ստացել է լեզվաբանական տերմինի արժեք և նշանակում է բառարանի մի յուրահատուկ տեսակ, որտեղ համաբարբառի վերածված երկի բոլոր բառերը խմբավորվում են այբբենականորեն, բառարանային ձևով: Համաբարբառ-բառարանում յուրաքանչյուր գլխաբառի հոգվածում խմբվում են համաբարբառի վերածված երկում տվյալ գլխաբառի գործածության բոլոր դեպքերը՝ բնագրային համապատասխան նախադասություններով և էջանշումներով:

4 Պ. Եղոս Հսապալյան, Տատիանի համաբարբառն և հայերեն Ավետարաններու առաջին թարգմանությունը, Վիեննա, 1937, էջ 102: Այս երկի հրատարակման թվականը Հ. Անասյանը սխալմամբ նշում է 1934 (Հ. Ս. Անասյան, նշվ. աշխ., էջ 3, ծանոթագրություն 3):

Անանիա Ալավերդյանը (XVIII դ.), Բաղդասար Դպիրը (նրա գործը հրատարակվել է 1753-ին և առաջին տպագիր համաքարբառն է), Հովսեփ Տեր-Ավագյանը, Թադևոս Աստվածատուրյանը և ուրիշներ: Մեզ են հասել նաև համաքարբառներ, որոնց կաղմող հեղինակները կա՛մ հայտնի չեն, կա՛մ ենթադրվում են: Անհեղինակ է, օրինակ, 1848-ին հրատարակված նշանավոր Զմյուռնիայի համաքարբառը, որը երկրորդ տպագիր համաքարբառն է:

Հայ հեղինակներից առաջինը Գ. Նարեկացին է, որի «Մատենան ողբերգութեան» պոեմը և այլ գործեր համաքարբառի են վերածվել XVIII դ.:

Դիտական նպատակադրման առումով հայ համաքարբառային գրականության մեջ առաջին լուրջ նվաճումը Թ. Աստվածատուրյանի կազմած համաքարբառն է⁵, Այս աշխատությունից հետո (1895 թ.) մինչև 1969 թ. գրաքարալեզու որևէ հեղինակի երկ համաքարբառի չի վերածվել:

1962 թ. հայ համաքարբառային գրականությունն աննախընթաց զարթոնք է ապրում: Սովետական Հայաստանում առաջին անգամ կազմակերպվում է բանասիրական կրթություն ունեցող մասնագետների հատուկ խումբ, և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի ընդհանուր ղեկավարությամբ քարտադրվում են դասական և հուդասական գրաբարի բազմաթիվ հեղինակների նշանավոր երկեր: 1969 թ. «Հայկական համաքարբառ» ընդհանուր խորագրով հրատարակվում է Մ. Խորենացու «Պատմութիւն հայոցի», իսկ 1972-ին՝ Ղ. Փարպեցու «Պատմութիւն հայոցի» և Նղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի բառաքերականական համաքարբառները: Համաքարբառ կազմողները, սակայն, նկատելով, որ բառաքերականական համաքարբառներն այնքան էլ նպատակահարմար ու գործնական չեն, վերջնականապես հանգում են միայն բնագրային համաքարբառներ կազմելու ճիշտ մտքին (հետագայում Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու, Նղիշեի նշված գործերի համար կազմվում են նաև բնագրային համաքարբառներ): Այս առումով, ըստ էության, «Հայկական համաքարբառը» հունի մեջ է մտնում 1969 թ., երբ Գ. Խոսունյանը կազմում է Ե. Կողբացու «Եղծ աղանդոցի» բնագրային համաքարբառը: Այն լույս է տեսնում 1972-ին հմուտ գրաքարագետ, պրոֆ. Ա. Աբրահամյանի խմբագրությամբ:

Այժմ «Հայկական համաքարբառի» կազմման ու հրատարակման գործն իրականացնում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ա. Աբրահամյանի ընդհանուր ղեկավարությամբ: «Հայկական համաքարբառն» իր այսօրվա ընդգրկմամբ, իրագործման ընթացքի մեջ գտնվող ծրագրերով, կազմակերպվածությունամբ, խաղացած դերով ու գիտական նպատակների հետապնդմամբ միանգամայն նշանակալից երկվույթ է հայ բառարանագրության մեջ՝ իբրև նրա տեսակներից մեկը և արժանի ամենայն խրախուսանքի:

Սկզբից ևեթ ասենք, քանի որ հայոց լեզվի գրավոր շրջանի համար՝ հատկապես հուդասական շրջանի գրաբարի և ընդհանրապես հայերենի լեզվական փաստերի կրած փոփոխությունների համեմատման առաջին ելակետը դասական գրաբարի լեզվական վիճակն է, ուստի միանգամայն ուրախալի է

⁵ Թ ա դ ե ո ս Ա ս տ վ ա ծ ա տ ու Ր յ ա ն, Համաքարբառ հին և նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1895:

և տրամաբանական, որ Ե. Կողբացու «Եղծ աղանդոցի» համաբարբառից անմիջապես հետո հրատարակվեցին Վ դ. մատենագիրներ Կորյունի «Վարք Մաշտոցի», Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց», Փ. Բուզանդի «Պատմութիւն հայոց», Մ. Խորենացու «Պատմութիւն հայոց», ապա՝ Ղ. Փարպեցու «Պատմութիւն հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Զենոնի «Յաղագս բնութեան», Հովհ. Դրասխանակերտցու «Պատմութիւն հայոց», Մ. Այրիվանեցու «Պատմութիւն հայոց», Գ. Նարեկացու «Մատեն ողբերգութեան» երկերի և մի քանի այլ հեղինակների հայտնի գործերի բնագրային համաբարբառները։ Դրանց բոլորի հիմքում մեծ մասամբ գրվեցին Ե. Կողբացու «Եղծ աղանդոցի» համաբարբառում կիրառված սկզբունքները, որոնք հիմնականում ընդունելի են, իսկ վերջինիս համար ուղեցույց է հանդիսացել Թ. Աստվածատուրյանի կազմած համաբարբառը՝ մասամբ սրբագրելով նրա թերի կողմերը։ Այսպես, Թ. Աստվածատուրյանի հեղինակած համաբարբառում բացակայում են Աստվածաշնչի որոշ բառեր՝ բայեր, մակբայներ, դերանուններ, շաղկապներ, նախդիրներ և այլն։ Որոշ գլխաբառերի համար միշտ չէ, որ բերվում են բոլոր նախադասութիւնները, բերվածներն էլ, իբրև ընդհանուր երևույթ, խիստ համառոտ են, շատ հաճախ՝ գրեթե ոչինչ չասող (այս հանգամանքը, իհարկե, մասամբ պայմանավորված է տեղ շահելու, աշխատության առանց այն էլ հսկայական ծավալն ապելի չմեծացնելու Թ. Աստվածատուրյանի ձգտմամբ)։ Սրան հակառակ, «Հայկական համաբարբառի» խիստ կարևոր արժանիքներից մեկը կատարելության ձգտումն է, համաբարբառի վերածվող երկից ոչինչ և ոչ մի բան դուրս չթողնելու մղումը։ Ահա թե ինչու հեղինակները ձգտել են ընդգրկել բոլոր խոսքի մասերը, բոլոր բառերը՝ յուրաքանչյուր գլխաբառի համար բերելով գերազանցապես պատշաճ ընդարձակությամբ նախադասութիւններ։

Գլխաբառ են դրվել ինչպես հարադրութիւնները, բառակապակցութիւնները, այնպես էլ դրանց բաղադրիչ տարրերը։ Այս դեպքում, օրինակ, եթե հարադրութիւնը բաղկացած է 2 բառից, նրա համար քաղված նախադասութիւնը (կամ նախադասութիւնները) զետեղվել է 3 գլխաբառի տակ, իսկ եթե բաղկացած է 3 բառից՝ 4 գլխաբառի տակ և այլն։ Այսպես, ամենալ զմտաւր գլխաբառ է դրվել (տե՛ս Ե. Կողբացու «Եղծ աղանդոցի» համաբարբառ, Երեւան, 1972, էջ 5), իսկ նրա համար բերված նախադասութիւնները տեղ են գտել նաև ամեն և միտ գլխաբառերի հոգվածներում (դեռ մի կողմ ենթ թողնում զ նախդիրը)։

Համանուններն առանձին գլխաբառերով ներկայացվելով՝ դրանց յուրաքանչյուրի դիմաց նշվել է խոսքիմասային պատկանելիութիւնը. օրինակ՝ Մի (թվական) (տե՛ս Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառը, գիրք 2, Երևան, 1973, էջ 131), Մի՛ (արգելական հրամայականի մասնիկ) (նույն տեղում, էջ 135), Մի (դերանուն) (նույն տեղում, էջ 134)։ «Հայկական համաբարբառից» դուրս չեն մնացել նաև հատուկ անուններն իրենց տարբեր տեսակներով՝ անձնանուններ, տեղանուններ և այլն։ Այսպիսով, վստահորեն կարելի է ասել, որ «Հայկական համաբարբառը» ինչպես ընդհանրապես հայ համաբարբառային գրականության, այնպես էլ Թ. Աստվածատուրյանի կազմած նշանավոր համաբարբառի նկատմամբ անտարակույս նոր որակ է, նոր նվաճում։

«Հայկական համարարառը» հայագիտությանը զբաղվող հայ և այլազգի յուրաքանչյուր մասնագետի սեղանի գիրքն է լինելու և՛ այսօր, և՛ հայ մշակույթի դոյատևության ողջ ընթացքում՝ որպես տեղեկատու անսպառ աղբյուր: Ահա թե ինչու իրավացի է Ա. Զեյթունյանը, երբ գրում է. «Համարարառները աստիճանաբար, աննկատ, բայց տիրապես մտնելու են հայագետների գիտական կենցաղի մեջ»⁶, Դժվար է ասել՝ հատկապես հայ լեզվաբանության հետադոտման համար կա՞ արգյոք մի բնագավառ, որին առավել կամ նվազ չափով անհրաժեշտ չլինեն համարարառները: Սակայն որպեսզի դրանք ծառայեն այն մեծ ու նվիրական նպատակին, որի համար կոչված են, առաջին հերթին պետք է անթերի լինեն: Բայց, ցավոք, «Հայկական համարարառը» զերծ չէ որոշ թերություններից, որոնք կարելի է բաժանել հիմնականում երկու խմբի՝ ա) միասնական սկզբունքների կիրառության գրեթե բացակայություն (սա գլխավորն է), բ) տեխնիկական վրիպակների առատություն⁷:

Ի պատասխան Ա. Զեյթունյանի նշված հոգևածի մի կետի, Գ. Թոսունյանը գրում է. «Գրաբարի համարարառի բաժինն ունի քարտերի մշակման և համարարառի կազմման որոշակի կանոններ ու սկզբունքներ, թեև հոգևածագիրը (այսինքն՝ Ա. Զեյթունյանը—Գ. Բ.) հակված է կարծելու, թե այդպիսիք չկան քարտարանում»⁸: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Հետագայում, սակայն, համարարառ կազմողները բավականաչափ շեղվել են այդ սկզբունքներից, մի բան, որ բացասաբար է անդրադարձել ընդհանուր գործի վրա: Այս հանգամանքը չի նկատել Հ. Անասյանը և գրել է. «Գիտականորեն անառարկելի կառուցվածք ունեն Ակադեմիայի քարտարանային բաժնում պատրաստվող բնագրային համարարառները»⁹: Սա չափազանցություն է. համոզվելու համար դիմենք փաստերի:

Բոլոր համարարառներում հարադրավոր բայերը և բառակապակցությունները այբբենական կարգով դրվել են որպես գլխաբառ: Սակայն Փ. Բուզանդի «Պատմութիւն հայոց», Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց», «Ղեւնդեայ Վարդապետի պատմութիւն» աշխատությունների համարարառներում այդ սկզբունքը զուգակցվել է նաև մի երկրորդ սկզբունքով՝ նույն ձևով գլխաբառ են դրվել նաև բայի դերբայական ձևերը: Նշված երկու սկզբունքներն էլ նպատակահարմար չեն, որովհետև՝

1. հարադրավոր բայերը, բառակապակցությունները¹⁰, բայի դերբայա-

⁶ Ա ն դր ա ն ի կ Զեյթունյան, Եղնիկ Կողբացու համարարառը (ՀՄՍՀ ԳԱ. «Լրաբեր», 1977, № 8, էջ 66):

⁷ Մեզանից առաջ Ա. Զեյթունյանը միայն Ե. Կողբացու «Եղծ աղանդոցի» համարարառի վերաբերյալ դրած հոգևածում ըստ էության անդրադարձել է այս խնդիրներին (տե՛ս նշվ. հոդ[.]). Ա. Զեյթունյանի բերած որոշ փաստեր ընդունելի են և արժեքավոր. նույն կարծիքին է նաև Գ. Թոսունյանի իր պատասխան հոգևածում (տե՛ս Գ. Թոսունյան, «Եղնիկ Կողբացու համարարառ»-ի առթիվ, ՀՄՍՀ ԳԱ. «Լրաբեր», 1978, № 1):

⁸ Գ. Թոսունյան, նշվ. հոդվ., էջ 89:

⁹ Հ. Ս. Անասյան, նշվ. աշխ., էջ 94:

¹⁰ Ա. Զեյթունյանը ևս անդրադարձել է հարադրավոր բայերի և բառակապակցությունների հարցին, բայց այլ տեսանկյունով: Այս ուղղությամբ Ե. Կողբացու «Եղծ աղանդոցի» համարարառում կիրառված սկզբունքը, որի մասին արդեն խոսել ենք, նա զննհատել է հետևյալ կերպ. «Եղնիկ Կողբացու բառապաշարը անկախ դրանից էլ ըստ ամենայնի վեր կհանվեր, եթե

կան ձևերը գլխաբառ ղեկելով՝ խիստ և անհարկի ծանրաբեռնվում է բառացանկը:

2. Դերբայական ձևերն այբբենական կարգով գլխաբառ ղեկելու պատճառով բայի դերբայական ձևերը հավաքվում են ոչ թե սովյալ կոնկրետ բայի բառահոլովածում, այլ ցարուցրիվ են լինում, կորչում տեսադաշտից: Օրինակ, Ադաթանդեղոսի «Պատմութիւն հայոց» երկի համաբարբառում (գիրք 1, Երեւան, 1973, էջ 130) առնել բայը գլխաբառ է դրվել իր տեղում, իսկ անցյալ դերբայը՝ առաքեալ-ը՝ նույն հատարի 165-րդ էջում, «Ղեւոնդեայ վարդապետի պատմութիւն» գործի համաբարբառում (Երեւան, 1978) լինիմ-ը տեղ է գտել 441-րդ էջում, իսկ անցյալ դերբայը՝ եղեալ-ը՝ 247-րդ էջում, Ղ. Փարպեցու «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (գիրք 3, Երեւան, 1978) ուտեմ բայը ղեկեղված է 179-րդ էջում, իսկ նրա ենթակայական դերբայը՝ կեցող-ը՝ 2-րդ գրքի (Երեւան, 1978) 230-րդ էջում և այլն:

Բանի որ դերբայական յուրաքանչյուր ձև գլխաբառ է դրվել, ուստի, եթե նույն հարադրությունը նույն մատենագրի լեզվում արտահայտված է տարբեր դերբայներով, դիմավոր բայով, դրանք սփռվել են այս ու այն կողմ՝ այբբենական դասավորությամբ: Օրինակ, Ադաթանդեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառում ակն ունիմ (դերբայական բաղադրիչով՝ ակն կալեալ, ակն աւնել), ի միտ առկանեմ (դերբայական բաղադրիչով՝ ի միտ առկեալ) և այլն իրենց տեղում են՝ համաբարբառում կիրառված սկզբունքի համաձայն: Բայց, մեր կարծիքով, իրենց տեղում չեն, անտեղի ու արհեստականորեն բաժանված են, առանձնացված, հեռացված:

Նկատենք նաև, որ մի շարք բայեր այս կամ այն մատենագրի լեզվում գործածվել են միայն դերբայական ձևով: Բայի դերբայական ձևերը գլխաբառ ղեկելու սկզբունքի պատճառով այդպիսի դեպքերում համաբարբառում բառարանային միավորը (եթե անորոշ դերբայով չի արտահայտված) կորչում է, չի երևում: Օրինակ, Ադաթանդեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (գիրք 1, էջ 170) աբբել բայը գլխաբառ է դրվել միայն անցյալ դերբայով՝ աբբեալ: Ուրեմն, թեև դերբայական որոշ ձևեր գոյականական, ածականական կիրառություն ունեն, ցանկալի է, որ հարադրավոր բայերը, բառակապակցությունները, բայի դերբայական ձևերը, ինչպես նաև գրություն տարբերակ համարվող բառերը¹¹ համաբարբառներում այսուհետև բերվեն

կազմող Ժ. Թոսունյանը չղիմև աշխատությունը ակամա ունացնող այսպիսի միջոցների (ընդգծումը մերն է—Գ. Բ.)» (տե՛ս նշվ. հոդվ., էջ 60): Մեր կարծիքով Գ. Թոսունյանի կիրառած սկզբունքն ընդունելի է, որովհետև եթե պատմագիտական, գրականագիտական և այլ ուսումնասիրությունների համար այդպիսի առանձնացումներն արժեք չունեն, ապա լեզվաբանական հետադրությունների համար այդ սկզբունքի կիրառումն անհրաժեշտ է: Բայց այլ բան է, որ նշված համաբարբառում կիրառված այդ սկզբունքը (այն էլ՝ թերի, ինչպես նկատել է Ա. Զեյթունյանը) ճշտորեն չի կիրառվել նաև համաբարբառների մյուս հատորներում:

11 Ա. Զեյթունյանը գրում է. «Թրության երկակի ձև ունեցող բառերը պետք է համախմբվեն մեկ բառահոլովածի տակ՝ ծայրահեղ դեպքում կարելի էր սխալ կամ քիչ օգտագործվող ձևերը հղել մյուսին: Առանձին բառահոլովածներ են կազմվել, օրինակ, Աղեփաճղը-Աղեփաճղոս, անգ է-անկ է, անձնիւր-անցնիւր, գեղ-գիւղ...» (նշվ. հոդվ., էջ 66): Ծիշտ է, թեև Աղեփաճղը, Աղեփաճղոս և այս կարգի բառերը կարող են նույն բնագրում նույն անձը նշել, բայց նպատակահարմար է դրանք ոչ թե մեկ բառահոլովածում ղեկել, այլ մի դեպքում գլխաբառ ղեկելով Աղեփաճղը-ը՝ նրա տակ իբրեւ ենթագլխաբառ բերվի Աղեփաճղոս-ը և ընդհանրապես՝ գլխաբառ ղեկելով Աղեփաճղոս-ը՝ ենթագլխաբառ դրվի Աղեփաճղը-ը: Այսպես էլ՝ զի՛ղ ու գե՛ղը և այլն, որպեսզի ոչինչ դուրս չմնա տեսադաշտից:

գլխաբառից անմիջապես հետո, քիչ խորքից, իբրև ենթագլխաբառ։ Այս սկզբունքի կիրառման դեպքում՝ ա) համաբարբառներում գլխաբառ կդրվեն միայն բառարանային միավորները, բ) ավելորդաբար չի ծանրաբեռնվի գլխաբառերի ցանկը, գ) դերբայները կհավաքվեն իրենց բայ-գլխաբառի հոգվածում, հարադրություններն ու բառակապակցություններն էլ՝ իրենց յուրաքանչյուրի բաղադրիչների ներքո։

Որոշ համարարբառներում նույն բառը տարբեր կիրառությունների համար դարձյալ գլխաբառ է դրվել։ Օրինակ, Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (գիրք 2, էջ 131—135) իրավացիորեն գլխաբառ են դրվել և՛ մի թվականը, և՛ մի դերանունը, և՛ արգելական հրամայականի մի՝ մասնիկը։ Սակայն մի՝ մասնիկը գլխաբառ է դրվել նաև և՛ առաջին ապառնու, և՛ երկրորդ ապառնու, և՛ զեղչված բայի հետ ունեցած կիրառությունների համար, որ ճիշտ չէ (նույն տեղում, էջ 135—136)։ Ինչպես այս, այնպես էլ փերր նշված դեպքերի պատճառով անհարկի ուռճանում է բառացանկը¹²։

Դասական և հոգասական գրաբարում կան անհղական կամ մեծ մասամբ իբրև անհղական գործածվող գոյականներ։ Դրանք գլխաբառ դնելիս համաբարբառներում երբեմն նկատվում է անմիօրինակություն։ Օրինակ, Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոցի», Գ. Նարեկացու «Մատենան ողբերգության» պոեմի համաբարբառներում (գիրք 1, Երևան, 1975, գիրք 2, 3, Երևան, 1978) գլխաբառ է գրված անդունդ, իսկ Մ. Այրիվանեցու «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (Երևան, 1975, էջ 23)՝ անդունդ ձևով, մինչդեռ նշված գլխաբառի համար բերված նախադասության մեջ հոգնակի ուղղական է՝ անդունդ՝ «Երկինք պատառեցաւ յեզրէ յեզր և անդունդ գոչեցին» (նույն տեղում)։

Համանուն բառերը, երբ գլխաբառ են դրվում, սովորաբար, դրանցից յուրաքանչյուրի դիմաց նշվում է խոսքիմասային պատկանելիությունը։ Օրինակ՝ Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (գիրք 1, էջ 187) գլխաբառով դրված առտառնոյ բառի դիմաց նշված է մակբայ, իսկ

12 Բնագրային համաբարբառների ծավալը համեմատաբար թեթևացնելու, կրճատելու նպատակով Հ. Անասյանը (նշվ. աշխ., էջ 95—96) առաջարկում է, որ եթե մինևույն երկն ունի կամ ունենալու է և՛ բնագրային, և՛ բառաքերականական համաբարբառներ, ապա բնագրային համարարբառի ծավալը պետք է կրճատել էական, պակասավոր, միադիմի բայերի, դերանունների, թվականների, նախդերանունների, նախադրույունների, մակբայների, շաղկապների, նայնաբկույունների հաշվին՝ դրանք չընդգրկելով բնագրային համաբարբառում։ Հեղինակն իր առաջարկը հիմնավորել է այսպես. «Այս կարգի բառերի կրճատումն այստեղ՝ կորուստ չէ գիտության համար, որովհետև նրանք բոլորն էլ իրենց տեղը կունենան համաբարբառի ենթարկված գրքի բերականական համաբարբառում» (նույն տեղում, էջ 96)։

Նախ՝ այսօր կազմվում են միայն բնագրային համաբարբառներ։ Սակայն անգամ եթե նույն նրկն ունենար և՛ բնագրային, և՛ բառաքերականական համաբարբառ, դարձյալ Հ. Անասյանի առաջարկն ընդունելի չէ։ Լեզվական կառուցվածքում յուրաքանչյուր խոսքի մաս իր դերն ունի և լեզվի զարգացման ճանապարհին՝ փոփոխման, կիրառության յուրահատկությունների ինքնատիպ պատմությունը, կենսապրությունը։ Եվ հենց այդ ամբողջի հաշվառմամբ է, որ, վերջին հաշվով, գրվում է լեզվի պատմական բերականությունը։ Երկրորդ՝ ինչո՞ւ արհեստականորեն անօգտակար դարձնել բնագրային համաբարբառը, զրկել նրան այն մեծ նպատակից, որին իսկապես կոչված է ծառայելու։ Բնագրային համաբարբառը տվյալ աղբյուրի այն անթերի տեղեկատվություն պիտի լինի, որին դիմելիս ուսումնասիրողն այլևս ո՛չ կասկածանք ունենա, ո՛չ էլ՝ բնագրին դիմելու անհրաժեշտություն։

անմիջապես հաջորդող բառի՝ արտաքին-ի դիմաց՝ նախադրություն, բայց նույն հատորի 145 և 154-րդ էջերում գլխաբառ է դրված Աստուած բառը, առանց որևէ լրացուցիչ նշման:

Պատահում են նաև այսպիսի դեպքեր. Փ. Բուզանդի «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (գիրք 1, Երևան, 1974, էջ 93) գլխաբառ է դրված անկրաւն-ը, իսկ նրա համար բերված նախադասության մեջ բառը գործածված է անկրօն ձևով: Ազաթանգեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (գիրք 1, էջ 177) գլխաբառ է դրված արդեօք-ը, իսկ նրա համար բերված նախադասություններում բառն ունի արդեօք ձևը: Այս դեպքում ևս պետք է միօրինակություն մտցնել: Առավել նպատակահարմար է բառը գլխաբառ դնել այնպես, ինչպես որ համաբարբառի վերածվող երկի բնագրում է, բանի որ այն կարող է ուսումնասիրության նյութ դառնալ նաև հնչյունաբանական հետազոտությունների համար:

Միօրինակություն չկա նաև գլխաբառերի հարադրությունների մշակման հարցում: Օրինակ, Ազաթանգեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (գիրք 1, էջ 5—6) ազդ բառը ներկայացված է և՛ ինքնուրույն կիրառությամբ, և՛ հարադրությամբ՝ ազդ առնել, ազդ առնեմ, ազդ արարեալ ձևերով: Կորյունի «Վարք Մաշտոցի» գործի համաբարբառում (Երևան, 1972, էջ 2) ազդ-ը բերված է միայն ազդ առնել, ազդ լինել, իսկ աներեւոյթ-ը՝ միայն աներեւոյթ լինել (էջ 16), ականատես-ը՝ ականատես լինել (էջ 2) հարադրություններով և այլն:

Ե. Կողբացու «Եղծ աղանդոցի» համաբարբառում (էջ 127) արէն է միադիմի բայը ճշտիվ առանձնացված է իբրև գլխաբառ, իսկ Ազաթանգեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (գիրք 1, էջ 202) և՛ անկախ կիրառությամբ արէն բառը, և՛ արէն է միադիմի բայը դրված են արէն գլխաբառի հոգվածում:

Ազաթանգեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառում (գիրք 1, էջ 5) ազդ գլխաբառի համար բերված է միայն մեկ նախադասություն, որտեղ ազդ-ը ունի ինքնուրույն կիրառություն. «Ձայն ազդոյ փողոյն... հատանիցի»: Այնուհետև, գլխաբառ են դրվել ազգ առնել, ազդ առնեմ, ազդ արարեալ հարադրությունները, որոնց համար բերված նախադասությունները չեն գետնի վրա նաև հարադրության անվանական բաղադրիչի՝ ազդ բառի հոգվածում: Սպասելի էր, որ այդ նախադասությունները չխմբվեին նաև հարադրության բայական բաղադրիչի տակ, բայց խմբվել են: Միասնական սկզբունքի դեպքում այդ նախադասությունները հարադրության երկու բաղադրիչների տակ էլ կա՞մ խմբվելու էին, կա՞մ՝ ոչ, որովհետև զրաբարում ազդ առնեմ հարադրության երկու բաղադրիչներն էլ կիրառվում են նաև անկախաբար: Մյուս կողմից, արկանեմ գլխաբառի տակ բերված նախադասություններում գործածված ձեռն արկանէր, ի միտ արկանէր, արկանէր ի սուր հարադրություններից թե՛ ի միտ արկանեմ-ը, թե՛ արկանեմ ի սուր-ը ընդհանրապես գլխաբառ չեն դրվել, մինչդեռ արկեալ դերբայական ձևով գլխաբառի հոգվածում (նույն տեղում, էջ 183—184) բերված «ի միտ արկեալ թագաւորին՝ գումարտակ առնէր» նախադասության մեջ գործածված ի միտ արկեալ հարադրավոր բայը գլխաբառ է դրվել նույն համաբարբառի 595-րդ էջում և, ինչպես որ սպասելի էր, բերվել է նույն նախադասությունը:

Փ. Բուդանչի «Պատմություն հայոցի» համաբարբառում (գիրք 1, էջ 217) արկանեմ գիրկս հարադրության համար բերվել է միայն մեկ նախադասություն՝ «Աստ արկեբ զդադիբ գիրկս», մինչդեռ Փ. Բուդանչի հիշյալ երկում գործածված է նաև՝ «արկանէբ զնուլս գիրկս»¹³, որ չի գետնադրվել տվյալ հարադրության հոդվածում։ Այսպիսի փաստերը կասկածելու հիմք են տալիս՝ արդյոք ամբողջական են համաբարբառների բառահոգվածները զխաբառների և դրանց հոդվածներում նախադասությունների լրիվ ընդգրկման տեսակետից։

ԵՅԼ բացատրական բառարաններում ընդունված է հղումներ կատարելը և իսկապիս էլ արդարացվում է, ապա համաբարբառը յուրահատուկ բառարան լինելով՝ նրանում հղում կատարելը նպատակահարմար չէ, իսկ հղումներ կան Գ. Նարեկացու «Մատնան ողբերգութեան» պոեմի, Զենոնի «Յաղագս բնութեան» աշխատության համաբարբառներում¹¹։

Ինչպես արդեն նշել ենք, հետազոտողները Թ. Աստվածատուրյանի համարարբառի թերություններից մեկը համարել են գլխաբառերի համար բերված օրինակների խիստ կցկտուր լինելը: Այդ հարցին վերջերս անդադարձել է նաև Գ. Թոսունյանը¹⁵: Նոր փաստեր բերելու հարկ չկա: Ասենք միայն, որ «Հայկական համարարբառի» այժմ արդեն հրատարակված բազմաթիվ հատորներում, առավել կամ նվազ չափով, կարելի է հանդիպել նշված թերու-
թյանը:

Որոշ համաբարբառներում նկատելի են բնագրային համաբարբառը նաև ներքին՝ բառաքերականական համաբարբառի սկզբունքով կառուցելու հետքեր: Գ. Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկի համաբարբառի (կազմող՝ Գ. Թոսունյան), «Ղեւոնդեայ Վարդապետի պատմութիւն» (կազմող՝ Պ. Բեդիրյան), Ղ. Փարպեցու «Պատմութիւն հայոցի» (կազմող՝ Ալ. Մարգարյան) և այլ գործերի համաբարբառներում տրված են նաև բառերի կիրառական հաճախականության տվյալները (բայց ոչ նվազող հաճախականություն): Ալ. Մարգարյանը և Պ. Բեդիրյանն իրենց կազմած համաբարբառների վերջում կցել են բառացանկ, որտեղ յուրաքանչյուր բառի դիմաց նշված է համաբարբառի վերածված երկում նրա կիրառական հաճախականության քանակը, ինչպես նաև թե այդ գլխաբառն իր բառահոգվածով համաբարբառի ո՞ր էջում է գտնվում: Գ. Թոսունյանն իր կազմած համաբարբառի առաջին և երկրորդ հատորի բառացանկը զետեղել է երկրորդ հատորի վերջում, իսկ երրորդին՝ երրորդ հատորի վերջում: Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ միասնականություն չկա:

Եվելի նպատակահարմար է և խիստ անհրաժեշտ, որ բնագորային համա-

13 Փ ա լ ա տ ո ս ի Բ ու զ ա ն դ ա Յ լ ո յ Պատմութիւն Հայոց», Պետերբուրգ, 1883, էջ 167:

14 Համարարարառում մասամբ հղումներ կատարելու առաջարկ է արել նաև Ա. Զեյթուն-
յանը (Եզլ. հոդվ., 15-րդ ժանդապարտություն), որն ընդունելի չէ: Ի դեպ, կարծում ենք, որ
ընդունելի չէ նաև Ա. Զեյթունյանի մի այլ առաջարկությունը, նա գրում է. «Եթե նախադասու-
թյան մեջ նույն բառը կրկնվում է երկուսն էլ ավելի անգամ, ապա այդ նախադասությունը նույն-
բան անգամ էլ պետք է կրկնվեր» (խոսքը Ծ. Կողբասյանի «Շղթա աղանդոցի» համարարարառի մա-
սին է— ագ. Բ.) (նույն տեղում, էջ 65):

15 Գ. Բ. Թ ո ս ու ն յ ա ն , Հայկական Համաբարբառի ստեղծման աշխատանքների մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1981, № 1, էջ 289)։

բարբառները կազմվեն միաժամանակ բառաքերականական համաբարբառների սկզբունքների համադրմամբ (թեև դա դժվար է ու աշխատատար), իսկ բառարանային միավորի կիրառական հաճախականության տվյալը տրվի յուրաքանչյուր բառից, բառակապակցությունից, հարադրությունից անմիջապես հետո՝ փակագծերի մեջ¹⁶։ Այս եղանակով կբարձրանա համաբարբառի և՛ գիտական արժեքը, և՛ այն կբեռնաթափվի ավելորդ էջերից։

Այն, որ «Հայկական համաբարբառը» միասնական սկզբունքներով չի կազմվում, կարելի է ցույց տալ բազմաթիվ այլ փաստերով, բայց բավարարվենք այսքանով։

Տեխնիկական բնույթի թերությունները ևս շատ հաճախ թյուրիմացությունների, սխալ ըմբռնումների կամ դժվարությունների տեղիք են տալիս։ Նշենք միայն մի քանիսը։ Համաբարբառներում նկատելի են՝ ա) գլխաբառերի այբբենական գասավորության խախտման դեպքեր (տե՛ս Գ. Նարեկացու «Մատենանոցների» երկի համաբարբառը, դիրք 1, էջ 87), բ) գլխաբառերի ավելորդ կրկնման դեպքեր (տե՛ս Ազաթանդեղոսի «Պատմութիւն հայոցի» համաբարբառը, դիրք 1, էջ 158—159), գ) գլխաբառերի համար բերված նախադասություններում հաճախ ընդգծված չեն համապատասխան բառերը (տե՛ս Մ. Այրիվանեսու «Պատմութիւն հայոցի» համաբարբառի (էջ 152) իւր բառի հոգվածը), Մ. Խորենացու «Պատմութիւն հայոցի» համաբարբառի (գիրք 2, Երևան, 1976, էջ 425) մինչև գլխաբառի հոգվածը և այլն, դ) ջնջված են ավելորդ կամ սխալ տպագրված բառեր, նախադասություններ, գծասլաքով այս կամ այն բառը, նախադասությունը տարվել է այնտեղ, որտեղ պետք է լիներ (այսպիսի փաստերն այնքան առատ են, որ առանձին համաբարբառների, առանձին էջեր նշելու հարկ չկա), ե) մեքենագրված տողերի արանքում խցկել են մոռացված բառեր կամ նախադասություններ, որով տողերից մեկը կամ ծածկել է մյուսին, կամ դժվար ընթեռնելի դարձրել համաբարբառի տվյալ հատվածը (տե՛ս «Ղեկունդեայ Վարդապետի պատմութիւն» գործի համաբարբառը, էջ 331, 632 և այլն), զ) որոշ համաբարբառների վերջում բերվել են «մոռացված» բառերի, վրիպակների ցանկեր (տե՛ս, օրինակ, Ե. Կողբացու «Եղծ աղանդոցի», Փ. Բուզանդի «Պատմութիւն հայոցի», գիրք 3-րդ, 1978) համաբարբառները և այլն։ Ցանկացածդ տպագիր գրքում, թերևս, կարող են լինել տեխնիկական բնույթի նմանօրինակ թերություններ։ Սակայն տեղեկաառ գրքերի համար դրանք աններելի են. հայագիտությամբ զբաղվողի համար «Հայկական համաբարբառը» յուրօրինակ տեղեկատու է։

Այժմ կազմման ընթացքի մեջ են Ստ. Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական», Մ. Ուռհայեցու «Ժամանակագրութիւն», Հովհ. Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ», Վ. Արեւելցու «Պատմութիւն», Հովհ. Իմաստասեր Օձնեցու «Մատենագրութիւն», Ասողիկի «Պատմութիւն տիեզերական», Ուխտանեսն եպիսկոպոսի «Պատմութիւն», Կ. Գանձակեցու «Պատմութիւն հայոց», Ֆրիկի «Բանաստեղծություններ» երկերի քնագրային համաբարբառները։ Ապագայում, անկասկած, ստեղծվելու են նաև նորերը, և մի գեղեցիկ օր լույս աշխարհ է գալու հայկական ընդհանուր համաբարբառը։ Սակայն մինչ այժմ

¹⁶ Հաճախականության տվյալները ճիշտ աչպես՝ փակագծերի մեջ են տրված տարիներ առաջ հրատարակված Ա. Ս. Պուշկինի ստեղծագործությունների համաբարբառ-բառարանում, որը միանգամայն ընդունելի է (տե՛ս «Словарь языка Пушкина», т. I—IV, М., 1956—1961):

հրատարակվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Հայկական համարարան» իր վեհ կոչմանն ու նպատակին ծառայելու համար խիստ անհրաժեշտ է, որ այն այսուհետև կազմվի գիտականորեն կուռ ու պարտադիր միասնական սկզբունքներով, որքան հնարավոր է՝ զերծ ամեն կարգի թերություններից: Իրա համար արդեն բավարար հիմքեր կան՝ տարիների ընթացքում կուտակված սեփական իսկ փորձը, հայ և օտար համարարանային գրականության ուսանելի կողմերի հաշվառումը:

ТЕКСТУАЛЬНЫЙ «АРМЯНСКИЙ КОНКОРДАНС» ПО ПРОИЗВЕДЕНИЯМ АВТОРОВ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

ГЕВОРГ БАГДИШЯН

Резюме

В армянской литературе слово *համարարան* (конкорданс) употреблялось еще в V в. В этом же веке выполнен армянский перевод труда Епрема Хури Асори под заглавием «*Մեկնութիւն համարարանի, որ քսի չորից տետրանշաց*» («Толкование конкорданса, составленное согласно четырем евангелистам»).

Армяне до XVIII в. переводят разноязычные конкордансы, а начиная с XVIII в. составляют собственные. Несмотря на это, подлинное возрождение армянской конкордансной литературы начинается с 1962 г. В Институте языка им. Р. Ачаряна АН Арм. ССР составлены и продолжают составляться конкордансы известных писателей классического и постклассического габара (Е. Кохпаци, М. Хоренаци, Агатагехос, Г. Нарекаци, Ст. Орбелиан и т. п.). Однако эти конкордансы составлены не по единообразному принципу, в них имеются некоторые технические недостатки.